Արձանագրություն N 2

2023 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար, էլեկտրոնային աճուրդով, «Առողջ եվ ակտիվ ծերացման» թեմայով հանրային իրազեկման արշավի իրականացման ծառայությունների ձեռք բերման նպատակով, «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2023/38» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիխ

ք. Երևան «07» «Օգոստոս» 2023թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ք. Գալստյան
Հանձնաժողովի անդամներ Լ. Բաբախանյան, Ռ. Խանագանյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ք. Գալստյան)

Ընդունել ի գիտություն, որ 12.07.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հուլիսի 12-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հուլիսի 13-ին ժամը 10:00-ին: 2023 թվականի հուլիսի 14-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ	info@gerontology.am	00900912
2	«Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ		00490235
3	«Թրեյդլի» ՍՊԸ	shahane03@gmail.com	08241701
4	«Կոնցեպտ Իվենթս» ՍՊԸ	concepteventsarmenia@gmail.com	06957798

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ք. Գալստյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ք. Գալստյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես հայտով ներկայացրած բոլոր փաստաթղթերը ստորագրված են Լիանա Ղազազյանի կողմից, ով ՀԿ-ի նախագահը չէ, սակայն ներկայացված չէր համապատասխան լիազորագիրը, ինչպես նաև Հավելված 1.3 նշված իրական շահառուների տվյալները պարունակող կայքէջը մուտք գործելիս հնարավոր չէր տեսնել վերջիններիս տվյալները: Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումը՝ հնարավորություն տալով մասնակցին շտկել արձանագրված անճշտությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցեց մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներբեռնել համակարգ շտկված տարբերակները: Սահմանված ժամկետում «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգ էին ներբեռնվել պահանջված շտկված փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի կողմից «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի հայտը գնահատվոց բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ք. Գալստյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 13.07.2023թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ք. Գալստյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Ք. Գալստյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2023/38» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ք. Գալստյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2023/38» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի՝ 8,285,800 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Մոնթե Կորպորեյշն», «Թրեյդլի» և «Կոնցեպտ Իվենթս» ՍՊԸ-ների հայտերը:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2023/38» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 08.08.2023թ.-ից մինչև 17.08.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ք. Գալստյան

Անդամներ՝ ---------- Լ. Բաբախանյան

---------- Ռ. Խանագանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք «Առողջ և ակտիվ ծերացման» թեմաներով հանրային իրազեկման արշավի իրականացման ծառայությունների վերաբերյալ վերջնական գներով

NN	Ծառայության անվանումը	Գնման գին	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ						«Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ					
			Նախնական առաջարկ			վերջնական առաջարկ			Նախնական առաջարկ			վերջնական առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար
1	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	13,000,000.00	13,000,000	0	13,000,000	8,285,800	0	8,285,800	13,000,000	0	13,000,000	9,777,000	0	9,777,000

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք «Առողջ և ակտիվ ծերացման» թեմաներով հանրային իրազեկման արշավի իրականացման ծառայությունների վերաբերյալ վերջնական գներով

NN	Ծառայության անվանումը	Գնման գին	«Թրեյդի» ՍՊԸ						«Կոնցեպտ Իվենտս» ՍՊԸ					
			նախնական առաջարկ			վերջնական առաջարկ			նախնական առաջարկ			վերջնական առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար
1	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	13,000,000.00	13,000,000	0	13,000,000	11,800,000	0	11,800,000	12,988,888	0	12,988,888	12,078,000	0	12,078,000